

## ՍՄՔԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ (ԳՈՒՆԴՍԱԲԼ) ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

### ՌՈՒԶԱՆ ՇԱԲՈՅԱՆ

XIII դարը հայ մատենագրության մեջ նշանավորվեց մի շարք փառափառ անուններով՝ Վարդան Այգեկցի, Մխիթար Այրիվանցի, Գրիգոր Ակնեցի, Վարդան Արևելցի, Վահրամ Բարունի, Ստեփանոս Օրբելյան, Ֆրիկ, Հովհաննես Երզնկացի և այլք: Հայ մտքի այս նշանավոր երախտավորների շարքում իր արժանավայել տեղն ունի Սմբատ Սպարապետը (1208 -1276 թթ.):

Սմբատը մեր պատմության ամենաերևելի քաղաքական և գրական գործիչներից մեկն է՝ ակնավոր զորավար, խոհեմ դիվանագետ, հմուտ օրենսգետ ու նշանավոր մատենագիր, որը սուսեր և դիվանագիտական սուր միտք է բանեցրել Կիլիկիայի հայկական պետության ամրապնդման համար, միաժամանակ մշակել ազգային օրենսդրություն ու իր ժամանակաշրջանի պատմությունը հաղորդել գալիք սերունդներին:

Սմբատ Սպարապետը բազմաժանր հեղինակ է: Նրա գրչին են պատկանում հայ միջնադարյան պատմագրության անգնահատելի աղբյուրներից մեկը՝ «Տարեգիրքը», «Անսիզք Անտիոքայ» և «Անսիզք Երուսաղեմայ» արժեքավոր իրավական հուշարձանների թարգմանությունները, մի շարք նամակներ ու չափածո գործեր<sup>1</sup>: Այսուհանդերձ, հայ իրականության մեջ Սմբատ Սպարապետի անունը փառքով պսակեց «Դատաստանագիրքը»: Խիստ մտահոգվելով Կիլիկիայի հայկական պետության ներքին բարեկարգության խնդիրներով՝ Սմբատը կազմեց օրենքների մի բազմաբովանդակ ժողովածու, ուր հստակ արտացոլված են Կիլիկիայի հայոց պետության քաղաքական ու իրավական կարգերը:

Լեզվաբանական առումով Սմբատի գործերն արժևորվում են նրանով, որ դրանք կիլիկյան հայերենի դասական նմուշներից են: Սմբատ Գունդըստաբլը իր գրական ժառանգությունը մեզ է ավանդել ժամանակի խոսակցական լեզվով՝ «ԺԳ դարու տիրող լեզուով»<sup>2</sup>: Մանուկ Աբեղյանի հավաստմամբ. «Նա իր աշխատությունները հորինել է այն լեզվով, որով խոսում էր ինքն ուրիշների հետ: Դա այլևս ոչ գրաբարն էր, ոչ էլ գրաբարախառն կենդանի լեզուն, այլ Կիլիկիայի խոսակցական բարբառը»<sup>3</sup>: Սմբատն ինքն է վկայում «Դատաստանագիրքի» առաջաբանում. «Բազում աշխատանաւք աշխատեցայ ի դատաստանագիրքս ծերացեալ մտաւք, վասն զի այլակերպած էր եւ հեռացած ի հին հայ բառէն ի նորոյս՝ հայնց որ իսկի չէին ի հասկնալ, եւ ոչ յօկտել գայր: Եւ ես բազում աշխատութեամբ փոխեցի զսա ի հին եւ դժւարաբառ եւ յանհասկընալի գրոց ի մեր հեշտալուր եւ ի սովորական բառս...»<sup>4</sup>:

Եվ թեև օրենքների ժողովածուն ժողովրդի հասարակ խավի համար չէր, այլ օրենսգետների, եկեղեցականների և պետական պաշտոնյաների, այնուամեն-

<sup>1</sup> Սմբատի «Անսիզք Երուսաղեմայ» իրավագիտական գործի հայերեն թարգմանությունը չի պահպանվել:

<sup>2</sup> Տե՛ս «Սմբատայ Սպարապետի Տարեգիրք», Վենետիկ, 1956 (հ. Սերոբե Ազըլյանի «Առաջաբանը», էջ ԺԲ, ծան. 6): Այսուհետև՝ Տարեգիրք:

<sup>3</sup> Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. Բ, Եր., 1946, էջ 209:

<sup>4</sup> Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, Եր., 1958, էջ 4: Այսուհետև՝ Դատաստանագիրք:

նայնիվ գրաբարը ԺԳ դարում անհասկանալի էր անգամ այս բարձրաստիճան մարդկանց համար<sup>5</sup>: Ուստի Սմբատը օրենսգիրքը կազմեց ժամանակի խոսակցական լեզվով «ամենուն ոչուրիմաց ընելու համար»՝ թերևս դրանով փորձելով ուժեղացնել Կիլիկիայի հայոց թագավորության կենտրոնական իշխանությունը<sup>6</sup>:

Նպատակ չունենալով սույն սեղմ հոդվածի շրջանակներում անդրադառնալու Սմբատի լեզվի համակողմանի քննությանը՝ փաստենք միայն, որ թեև Սմբատ Սպարապետը ստեղծագործել է միջին հայերենով, այնուամենայնիվ միջին հայերենը տարբեր կերպ է դրսևորվել բովանդակությամբ ու բնույթով իրարից տարբեր նրա երկերում: Այս փաստը հաստատում է Ղևոնդ Յովնանյանը. «Եթե «Դատաստանագիրքը» ծայրէ ի ծայր ռամկօրեն է՝ սովորական կամ ժողովրդական լեզուաւ, ապա «Տարեգրքի» առաջին ընդարձակագոյն մասն աւելի ռամկախառն գրաբար կրնայ համարուիլ, ետին կարճ մասն ընտիր եւ վայելուչ ռամկօրեն է»<sup>7</sup>:

Այս առումով Սմբատի գործերը բացառիկ աղբյուր են հայոց լեզվի զարգացման միջին շրջանի բառապաշարային և քերականական իրողությունների ուսումնասիրության համար<sup>8</sup>:

Ստորև ներկայացնենք Սմբատ Սպարապետի գրչին պատկանող մեզ հասած աշխատությունները՝ տալով դրանց համառոտ բնութագիրը:

**1. «Տարեգիրք»:** Պատմագիտության մեջ Սմբատ Սպարապետի «Տարեգրքին» առաջին անգամ անդրադարձավ Միք. Չամչյանը: Նախապես այն համարելով անհայտ հեղինակի գործ՝ հետագայում որոշակիացրեց իր տեսակետը. «Բայց որոշակի եղել ականատես պատմիչն Կիլիկեացոց, որ թուի լինել Սմբատ Կիլիկեցի»<sup>9</sup>:

«Տարեգիրքը» խիստ արժեքավոր աղբյուր է ոչ միայն Կիլիկյան հայկական պետության ներքին և արտաքին քաղաքականությունը լուսաբանելու, այլև Կիլիկիայի ոչ նվազ փառահեղ պատմությունը հստակ պատկերացնելու համար: Այս առումով Սմբատը, իրապես, Կիլիկիայի հայոց պետության «ամենն հեղինակաւոր ժամանակագիրն է»<sup>10</sup>:

Սմբատ Սպարապետն իր Պատմությունը շարադրել է հայերեն: Այնինչ հիմք ընդունելով Սմբատի՝ «թարգմանող տառիս եւ պատմութեանս» արտահայտությունը՝ բանասիրության մեջ առաջ քաշվեց այն թյուր կարծիքը, թե իբր Սմբատը «Տարեգիրքը» նախապես գրել է ֆրանսերեն, հետո թարգմանել հայերեն<sup>11</sup>: Փաստենք, որ «թարգմանել» բառն ունի նաև բացատրել, մեկնաբանել, ճառել, պատմել նշանակությունները<sup>12</sup>: Մեկ այլ տեղ Սմբատը

<sup>5</sup> Տե՛ս **Յր. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, մաս Բ, Եր., 1951, էջ 232:

<sup>6</sup> Տե՛ս **Յովհ. Մկրյան**, Օրենսգիրք եւ դատաստանագիրք մեր Ռուբինեաց՝ Հեթում եւ Լեւոն թագաւորներու («Յոյս» անագիր, 1870, ապրիլ, թիւ 43, էջ 68):

<sup>7</sup> **Ղ. Յովնանեան**, Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրենի վրայ, Վիեննա, 1897, Տետր Ա, մաս 1, էջ 227:

<sup>8</sup> Սմբատի լեզվի ուսումնասիրության հիման վրա Ղ. Յովնանյանն ու Յ. Կարստը գրեցին լեզվաբանության պատմության մեջ իրենց արժեքով բացառիկ տեղ գրավող աշխատություններ (տե՛ս **Ղ. Յովնանեան**, նշվ. աշխ., **Նաև**՝ Historische Grammatik des Kilikisch-Armenischen, von Dr. **Josef Karst**, Strassburg, 1901):

<sup>9</sup> **Միք. Չամչեան**, Պատմութիւն հայոց, հ. Գ, Վենետիկ, 1784, էջ 335:

<sup>10</sup> «Տարեգիրք», Վենետիկ, «Յառաջաբան», էջ Ե:

<sup>11</sup> Տե՛ս «Տարեգիրք արարեալ Սմբատայ Սպարապետի հայոց, որդւոյ Կոստանդեայ կոմսին Կոռիկոս», Փարիզ, 1859, էջ 5, ծան. 2:

<sup>12</sup> Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. Ա, Եր., 1979, էջ 798, նաև՝ **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. Ա, Եր., 1976, էջ 423:

վկայուն է «Ի թուին 657 (1208) ծնաւ Սմբատ Գունդստաբլն թարգմանող պատմութեան»<sup>13</sup>, այսինքն՝ պատմությունը գրող: Ուստի կասկածից դուրս է, որ Սմբատը «Տարեգիրքը» գրել է հայերեն:

Սմբատ Սպարապետը իր «Տարեգիրքը» սկսել է 951 թվականից և հասցրել մինչև 1272 թվականը: Հետագայում՝ Սմբատի մահից հետո, անհայտ տարեգիրն այն հասցրել է մինչև 1331 թվականը: «Տարեգիրքը» շարադրելիս Սմբատն օգտվել է Մատթեոս Ուռհայեցու, Միքայել Ասորու, Գուլիելմոս Տուրացու և հավանաբար նաև հույն պատմիչների աշխատություններից<sup>14</sup>: Մասնավորապես 951-1136 թվականներին վերաբերող նյութը քաղել է բացառապես Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունից», իսկ մնացած 50-60 տարվա պատմության ականատեսն ու շարադրողն է եղել<sup>15</sup>:

«Տարեգրքում» Սմբատն իր ուշադրությունը հատկապես բևեռում է Ռուբինյանների իշխանության վրա՝ մանրամասն ներկայացնելով Լևոն Բ-ի թագավորության տարիները՝ կարևորելով Կիլիկյան թագավորության համահայկական նշանակությունը: Միաժամանակ բովանդակալից տեղեկություններ է հաղորդում հայ-մոնղոլական, հայ-արաբական, հայ-պարսկական, հայ-բյուզանդական հարաբերությունների մասին, անդրադառնում նաև հայ իշխանական տների ներքին հակամարտություններին: Ուշագրավ է Սմբատի վերաբերմունքը խաչակիրների արշավանքների նկատմամբ. մերկացնելով նրանց զավթողական քաղաքականությունը՝ պատմիչը գրում է. «... եւ ոչ ոք կարէ պատմել զդառնութիւն զոր ածին քոսանգքն ի վերայ հայոց»<sup>16</sup>:

Սմբատի «Տարեգիրքն» ունի երեք հրատարակություն՝ մոսկովյան<sup>17</sup>, փարիզյան<sup>18</sup> և վենետիկյան<sup>19</sup>: Առաջին երկուսի հիմքում ընկած են հետին դարերի (XVI-XVII) գրչության ձեռագրեր, մինչդեռ վենետիկյան հրատարակությունը, որը նախորդ հրատարակությունների համեմատ երկուսուկես անգամ ավելի ծավալուն է, կատարված է 1280 -1315 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում օրինակված, այժմ վենետիկի Ս. Ղազար կղզու մատենադարանում պահվող ամենահին ձեռագիր տեքստից<sup>20</sup>:

**2. «Անսիզք Անտիոքայ»:** Մոտավորապես XIII դարի երկրորդ կեսի սկզբին Սմբատը հին ֆրանսերենից հայերեն թարգմանեց «Անսիզք Անտիոքայ» օրենսգիրքը: Միջնադարյան իրավագիտական այս արժեքավոր հուշարձանը պահպանվել է միայն Սմբատի հայերեն թարգմանությամբ, ֆրանսերեն բնագիրը չի պահպանվել:

«Անսիզք Անտիոքայ» օրենքների ժողովածուն ներկայացնում է Անտիոքի խաչակիր իշխանության օրենքները: Օրենսգիրքը բաղկացած է երկու մասից. առաջին մասը պարունակում է 17 հոդված, ուր քննարկ-

<sup>13</sup> «Տարեգիրք», Փարիզ, էջ 116:

<sup>14</sup> Տե՛ս «Տարեգիրք», վենետիկ, էջ 2-է:

<sup>15</sup> Տե՛ս **Ղ. Յովնանեան**, նշվ. աշխ., էջ 166-167:

<sup>16</sup> Տարեգիրք, վենետիկ, էջ 145:

<sup>17</sup> Տե՛ս «Սմբատ Սպարապետի եղբոր Հեթմոյ առաջնոյ արքայի հայոց, Պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպօլիս եւ հայոց մեծաց, ըստ կարգի ժամանակաց», Մուկուլայ, 1856 (հրատարակիչ՝ Ոսկան Հովհաննիսյան):

<sup>18</sup> Առաջին հրատարակության հիման վրա 1862 թ. Վիկտոր Լանգլուան «Տարեգրքի» մի մասը թարգմանել է ֆրանսերեն (տե՛ս **Langlois V.** *Extrait de la chronique de Sempad*, St. Petersburg, 1862):

<sup>19</sup> վենետիկյան հրատարակությունը Ս. Ազըլյանինն է:

<sup>20</sup> Տե՛ս **հ. Սերոբէ վ. Ազըլեան**, Առաջին խաչակրութիւնը եւ Երուսաղէմի ազատումը (համեմատ Կիլիկեան Տարեգրքին), «Բազմավեպ», 1949, №1-2, էջ 12:

վում են ունեցվածքային, քրեական, սահմանային, նաև դատարանին վերաբերող հարցեր, երկրորդ մասը պարունակում է ընտանեկան, ժառանգական, ֆինանսական և առևտրի հարցերին վերաբերող 21 հոդված:

Ինչո՞ւ Սմբատը թարգմանեց Անտիոքի օրենսգիրքը: Թարգմանության շարժառիթը հետևյալն է. «Եւ արդ վասն զի սովորութեամբ այն Անսիզովն կու գնայր ազգս մեր եւ դարպասս Հայոց, եւ սղալունն ինչ կուգայր մեզ վասն տգիտութեան եւ վտանգութիւնք ոգւոց, եւ պղերգանք ինչ վասն հարցանելոյ անդ զմեծամեծ դատաստանսն...»<sup>21</sup>:

Հին ֆրանսերենով կազմված օրենքների այս ժողովածուն հավանաբար լայն տարածում չի ունեցել Կիլիկիայում, Սմբատն այն ձեռք է բերել Անտիոքից իր ազգական Սիմոն Գուլնդստաբլից. «ուժգին տենչմամբ եւ բազում աշխատութեամբ գտի գաս...»<sup>22</sup>:

Ցավոք, Սմբատը չի նշում, թե կոնկրետ երբ է թարգմանել Անտիոքի օրենքները: Այս հարցի շուրջ թեև հայագիտության մեջ զանազան վարկածներ կան, այսուամենայնիվ ուսումնասիրողներից ոչ ոք չի նշում թարգմանության ստույգ թվականը<sup>23</sup>: Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ այն թարգմանվել է 1265 թվականից առաջ<sup>24</sup>: Նմանատիպ կարծիքի է նաև Հր. Աճառյանը<sup>25</sup>: Ա. Գալստյանը, իր «Սմբատ Սպարապետ» արժեքավոր աշխատության մեջ հիմք ընդունելով այն փաստը, որ Անսիզների շատ հոդվածներ օգտագործվել են Սմբատի կողմից իր «Դատաստանագիրքը» կազմելիս, ենթադրում է, որ այդ օրենքները թարգմանված պիտի լինեին 1253 թվականից առաջ<sup>26</sup>:

«Անսիզք Անտիոքայ» օրենսգրքի հայերեն ձեռագրերից առաջինը հայտնաբերվել է Հալեպում և պահվում է Վենետիկի Մատենադարանում: Այն արտագրվել է 1331 թ. (գրիչ՝ Սարգիս)<sup>27</sup>: Հենց այս ձեռագիրն է Ղ. Ալիշանը 1876 թ. կրկին թարգմանել ֆրանսերեն՝ վերականգնելով իրավագիտական այդ հուշարձանի բնագիրը<sup>28</sup>: Մյուս ձեռագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների գրադարանում<sup>29</sup>: 1618 թ. արտագրված երրորդ ձեռագիրը, որի սկզբից, ցավոք, մի շարք հոդվածներ բացակայում են, պահվում է Երևանի Մատենադարանում<sup>30</sup>: 1956 թ. Հ. Քյուրտյանը, 1622 թ. մի ձեռագրից լրացուցիչ նյութեր հրատարակելով, լրացրեց «Անսիզք Անտիոքայի» վերոհիշյալ ձեռագրերը<sup>31</sup>:

**3. «Դատաստանագիրք»:** Որքան էլ «Անսիզք Անտիոքայ» օրենքների ժողովածուն լայն կիրառում ստացավ Կիլիկիայի հայկական թագավորությունում<sup>32</sup>, այնուամենայնիվ 1265 թ. Սմբատ Սպարապետը ձեռնամուխ ե-

<sup>21</sup> Assises d'Antioche, par. L. Alischan, Venise, 1876, «Յառաջաբան», էջ 3:

<sup>22</sup> «Assises d'Antioche», էջ 3:

<sup>23</sup> Խ. Սամուելյանն այն վարկածն է առաջ քաշում, որ Անտիոքի օրենսգիրքը թարգմանվել է XIII դարի առաջին կեսին (տե՛ս Խ. Սամուելյան, Հին հայոց իրավունքի պատմություն, հ. Ա, Եր., 1939, էջ 91): Ըստ Ա. Սուքիասյանի՝ այն թարգմանվել է 1235 և 1253 թթ. միջոցում (տե՛ս Ա. Սուքիասյան, Սմբատ Սպարապետը որպես պատմիչ, օրենսգետ և օրենսգիր, «Բանբեր Երևանի համալսարանի», 1974, №1, էջ107):

<sup>24</sup> Տե՛ս «Assises d'Antioche», էջ XIX:

<sup>25</sup> Տե՛ս Հր. Աճառյան, Անձնանունների բառարան, հ. 4, Եր., 1948, էջ 558:

<sup>26</sup> Տե՛ս Ա. Գալստյան, Սմբատ Սպարապետ, Եր., 1961, էջ 106:

<sup>27</sup> Տե՛ս Լ.Խաչիկյան, ԺԴ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Եր., 1950, էջ 239:

<sup>28</sup> Տե՛ս «Assises d'Antioche»:

<sup>29</sup> Տե՛ս Ա. Գալստյան, նշվ. աշխ., էջ 100:

<sup>30</sup> Տե՛ս Մատենադարանի ձեռագիր, № 487, էջ 5բ:

<sup>31</sup> Տե՛ս Յ. Քյուրտեան, Նորագիտ օրինակ մը «Անսիզք Անտիոքայ» օրենսգրքին, «Բազմավեպ», 1956, յունուար-փետրուար, էջ 15-21:

<sup>32</sup> Տե՛ս Паповян А. Ассизы Антиохийские. «Բանբեր Մատենադարանի», 1958, № 4, Կ. Յուզբաշյանի «Առաջաբանը», էջ 333:

ղավ կազմելու Կիլիկյան պետության ազգային օրենսգիրքը՝ դրանով իսկ ծածկելով այն բացը, ինչից դժգոհում էր Ներսես Լամբրոնացին՝ նշելով, որ Կիլիկիայի հայերը «ոչ ունէին գիրս, որով ընտրեսցին զիրաւունս, զոր եւ այլոց ազգաց տեսանէին»<sup>33</sup>:

Սմբատի «Դատաստանագիրքը» Կիլիկյան հայոց թագավորության համար ունեցավ գործնական նշանակություն՝ կարգավորելով երկրի քաղաքական, իրավական, տնտեսական կյանքի հարցերը:

«Դատաստանագիրքը» բաղկացած է առաջաբանից և 7 բաժնից՝ ունի 202 հոդված: Դրանք ոչ միայն արծարծում են Կիլիկիայի հայկական պետության տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքին վերաբերող հարցեր, այլև Սմբատն արտահայտում է իր հայացքներն իրավունքի և բարոյականության, հասարակական ու քաղաքական հարաբերությունների մասին ընդհանրապես: «Դատաստանագրքում» սահմանված են պետական-վարչական, քաղաքացիական, ամուսնական, ընտանեկան, ժառանգական, եկեղեցական, նաև դատական իրավունքին վերաբերող օրենքներ: Սմբատը մշակել է ի մի է բերել երեխաների կրթությանն ու դաստիարակությանը, ընտանեկան իրավունքին, եկեղեցական, հասարակական կարգը խախտողներին, հարբեցողներին, կաշառակերությանը, ժառանգական հիվանդություններին և ընդհանրապես բժշկությանը և այլ բնագավառներին ու հարցերին վերաբերող բազմաթիվ բովանդակալից հոդվածներ, որոնցով էլ նա տարբերվում է իր նախորդ օրենսգիրքներից:

Իրավական ողջ նյութը շարադրված է կուռ կառուցվածքով՝ ըստ իրավունքի հիմնական ճյուղերի, նախ՝ պետական ու եկեղեցական, ապա՝ քաղաքացիական ու քրեական իրավունքը: «Դատաստանագրքի» առաջաբանում Սմբատը գրում է. «Յառաջ պատեհ համարեցաք զվիճակեալ դատաւորացն գրել. բուն յառաջ զթագաւորացն, վասն զի յԱստուծոյ կարգեցաւ թագաւորութիւնն եւ յԱստուծոյ տեղին է համարած ի յերկրի: Եւ զնոցին դատաստանն եւ զիրաւունքն գրեցաք. եւ ապա զկարգաւորացն եւ զաշխարհականացն եւ զայրուկնոջն»<sup>34</sup>:

Ավելորդ չենք համարում անդրադառնալ հայագիտության մեջ գոյություն ունեցող այն իրարամերժ կարծիքներին, որոնք վերաբերում են Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» ինքնուրու՞նյն գործ, թե՞ այլ օրենսգրքի թարգմանություն լինելուն: Հիմք ընդունելով Սմբատի հիշատակած «փոխեցի զսա» արտահայտությունը և զուգադրելով Գոշի ու Սմբատի «Դատաստանագրքերի» որոշ հոդվածներ՝ գիտնականների մի խումբ (Ղ. Ալիշան, Ղ. Հովնանյան, Յ. Կարստ, Վ. Բաստամյան) գտնում է, որ Սմբատը ոչ թե ինքն է ինքնուրույն կազմել «Դատաստանագիրքը», այլ փոխադրել է Գոշի «Դատաստանագիրքը»<sup>35</sup>: Մյուսները (Գ. Ջարբեհանայան, Ա. Ղլտճյան, Մորգան) այն կարծիքին են, որ Սմբատը ոչ թե բառացի ընդօրինակել է, այլ օգտվել է, ծաղկաքաղ է արել Գոշի «Դատաստանագրքից»<sup>36</sup>: Ըստ գիտնականների երրորդ խմբի (Մ. Աբեղյան, Խ. Սամուելյան, Ա. Սուքիասյան Գ. Մի-

<sup>33</sup> Խ. Սամուելյան, նշվ. աշխ., էջ 72:

<sup>34</sup> «Դատաստանագիրք», էջ 5:

<sup>35</sup> Տե՛ս Ա. Գալստյան, Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագրքի» մասին, «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, Եր., 1952, №2, էջ 90-92, նաև՝ «Դատաստանագիրք», էջ XIII-XIX:

<sup>36</sup> Տե՛ս «Դատաստանագիրք», էջ XVIII:

քայելան)՝ Սմբատը, հիմնականում օգտվելով Գոշի «Դատաստանագրքից», այն վերափոխել ու համապատասխանեցրել է Կիլիկիայի տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական, տնտեսական, իրավական պայմաններին<sup>37</sup>: Հակադրվելով վերը նշված կարծիքներին՝ Ա. Գալստյանն իր «Սմբատ Սպարապետ» աշխատության մեջ փաստում է, որ «փոխեցի զսա» նախադասությամբ Սմբատը նկատի է ունեցել հայ ժողովրդի հնագույն իրավագիտական հուշարձաններից մեկը՝ «Կանոնագիրք Հայոցը», որը Սմբատի կազմած օրենսգրքի հիմնական աղբյուրներից է եղել, իսկ Սմբատի վկայած «հնամաշ» ու «այլակերպած» և «ոչ յօկտել զայր» արտահայտությունները վերաբերում են ոչ թե Գոշի «Դատաստանագրքին», այլ հենց «Կանոնագիրք Հայոցի» հնագույն օրինակներից մեկին<sup>38</sup>:

Գոշի և Սմբատի «Դատաստանագրքերի» որոշ հոդվածների նմանությունը բացատրվում է նրանով, որ երկու հեղինակներն էլ իրենց նյութերը հիմնականում վերցրել են ընդհանուր աղբյուրներից (Մովսիսական օրենքներ, Հայոց կանոնագիրք, ասորական դատաստանագիրք, հռոմեական օրենքներ՝ Հուստինիանոսի կոդեքս և այլն)<sup>39</sup>:

Այդ նյութերը հեղինակներից յուրաքանչյուրը մշակել և հարմարեցրել է իր ժամանակի իրավական պայմաններին: Խորագրին ուսումնասիրելով Սմբատի և Գոշի այն հոդվածները, որոնց համար սկզբնաղբյուր են ծառայել վերոհիշյալ օրենսգրքերը՝ պարզվում է, որ դրանք միանգամայն տարբեր հոդվածներ են: Միաժամանակ Սմբատի «Դատաստանագրքում» բացակայում են Գոշի «Դատաստանագրքի» ամենաարժեքավոր հատվածը՝ «Նախադրությունը», և ևս 57 հոդված: Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ Գոշի և Սմբատի «Դատաստանագրքերը» նույնական գործեր չեն<sup>40</sup>:

Հիրավի, Սմբատի օրենսգիրքն իր ձևով և կառուցվածքով, իրավական նյութերի ընդգրկմամբ լիարժեք օրենսգիրք է: Այն, խիստ կարևոր իրավական հուշարձան լինելով, ավելի քան հարյուր տարի գործել է Կիլիկիայի հայկական պետությունում որպես պաշտոնական օրենսգիրք:

Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» մասին հայագիտության մեջ առաջին անգամ տեղեկություն է տալիս Պոլսի հայոց պատրիարքի փոխանորդ Հովհ. Սկրյանը 1870 թ. «Յոյս» ամսագրում հրատարակած հոդվածում. «Արդ ես մինչ յայժմ ազգային պատմութեանց մեջ այսպիսի նշան մը տեսած չեմ»<sup>41</sup>:

Ղևոնդ Հովնանյանը իր «Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ» աշխատության մեջ բարձր գնահատելով Սմբատի «Դատաստանագիրքը» այն առաջին անգամ դարձրեց բանասիրական քննության նյութ. «Յերեւան ելաւ Մատեանս, որ կրնայ առանց չափազանցութեան նկատուիլ իբրեւ մի ի պատուական գոհարաց ոչ միայն ռամկօրէն՝ այլ նաեւ բովանդակ հայ գրականութեան»<sup>42</sup>:

«Դատաստանագրքի» գիտական-համեմատական բնագիրը՝ ռուսերեն թարգմանությամբ, հրատարակել է Ա. Գալստյանը՝ նկատի ունենա-

<sup>37</sup> Տե՛ս նույն տեղը, էջ XVIII-XIX:

<sup>38</sup> Տե՛ս Ա. Գալստյան, Սմբատ Սպարապետ, էջ 117:

<sup>39</sup> Սմբատն իր «Դատաստանագրքում» հիշատակում է 16 աղբյուր:

<sup>40</sup> Այս հարցում մենք համամիտ ենք Ա. Գալստյանի հետ:

<sup>41</sup> «Յոյս», ապրիլ, թիւ 43, էջ 87: Հովհ. Սկրյանը «Դատաստանագիրքը» թյուրիմացաբար համարում է «Անսիզք Անտիոքայի» թարգմանություն:

<sup>42</sup> Ղ. Յովնանյան, նշվ. աշխ., էջ 185:

լով Յ. Կարստի<sup>43</sup>, Ա. Ղլտճյանի<sup>44</sup> հրատարակությունները, ինչպես նաև Երևանի Մատենադարանի և Վենետիկի Մխիթարյան միաբանության գրադարանի մեկական ձեռագրերը<sup>45</sup>:

**4. Նամակներ, չափածո գործեր:** Բացի վերը նշված պատմական ու իրավագիտական աշխատություններից՝ մեզ են հասել նաև Սմբատ Սպարապետի նամակները: Դրանցից հատկապես ուշադրության է արժանի իր քեռայրին՝ Կիպրոսի թագավորին, հասցեագրված ֆրանսերեն նամակը (1247 թ.), ուր հեղինակն ուշագրավ փաստեր է հաղորդում մի կողմից մոնղոլների նվաճումների, նրանց նիստուկացի, սովորությունների, մյուս կողմից էլ՝ Իրանի, Միջին Ասիայի երկրների մասին<sup>46</sup>: Սմբատի գրչին է պատկանում նաև Յովհաննես Դամասկեցու «Յաղագս գոյի էութեան» փիլիսոփայական աշխատության մեկնությունը<sup>47</sup>: Հենց այս ձեռագրի ցանկի վերջում է զետեղված Սմբատի չափածո գրվածքներից ամենահինը՝ 1244 թ. Աղանայում գրված բանաստեղծությունը՝ հետևյալ հիշատակությամբ. «Ձմեղաւոր հողս գՍմբատ՝ Հայոց սպարապետս յիշեսջիք ի Քրիստոս եւ ինքն յիշողաց ողորմեսցի, ամեն»<sup>48</sup>:

Սմբատի պոեմներից իր պատմական նշանակությամբ աչքի է ընկնում 1269 թ. գրած «Ի ճաշոց գրիս» պոեմը՝ նվիրված Մառի ճակատամարտին: Պոեմում Սմբատը մանրամասն տեղեկություններ է հաղորդում այդ աղետաբեր ճակատամարտի ցավալի հետևանքների մասին:

Բերենք մի հատված Սմբատի պոեմից.

Սկիզբն էր ի չար ժամանակի,  
Երբ Մարցին եկն ի Մառի  
Վ'եսպան զԹորոս թագվորորդի,  
Եւ այլք բազումք ի նոյն զկնի,  
Վ'այրեց զՍիս եւ զՍսիս,  
Եւ զինչ որ շէն կայր 'ի միջի.  
Եւ զԼեւոն ամազ որդի  
Հեթմոյ Հայոց մեծ արքայի՝

Տարաւ ծառա վ'եղ ի բանտի  
Ի քաղաքին Եգիպտոսի:  
Բայց զո՞ր ածեն աստ ի գրի  
Չառ եւ ամար եւ զարոյննի,  
Կամ զհամարքն ծառայի,  
Չորս ըստ մեղաց եհաս երկրի:  
Որ թէ զամենն գրել էի՝  
Նա շատ առնոյր թուխթ եւ տեղի<sup>49</sup>:

<sup>43</sup> 1905 թ. Ստրասբուրգում Յ. Կարստը հրատարակեց Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» հայերեն տեքստը՝ գերմաներեն թարգմանությամբ՝ օգտվելով էջմիածնի և Վենետիկի ձեռագրերից (XIV դար): Կարստի ձեռքի տակ չի եղել Երևանի Մատենադարանի ձեռագիրը, այն պարզապես հեղինակի խնդրանքով արտագրվել և ուղարկվել է Ստրասբուրգ, ուստի Կարստի թարգմանության մեջ առանձին հոդվածներ կան բաց են թողնված, կան թերի են հրատարակված (տես **Josef Karst, Sem-padscher Kodex aus dem XIII Jahrhundert, B. I, Strassburg, 1905**):

<sup>44</sup> «Սմբատ իշխանի (Գունդստաբլի) Դատաստանագիրք», հրատարակեց Ա. Ղլտճյան, Վաղարշապատ, 1918:

<sup>45</sup> Դրանցից ամենահին գրչությունն ունի Վենետիկի Մխիթարյան միաբանության ձեռագիրը (1331 թ.): Երևանի Մատենադարանի ձեռագիրը արտագրված է 1618 թ. Վարդան արեղայի ձեռքով (տես **Ղ. Յովհաննես, նշվ. աշխ., էջ 185**):

<sup>46</sup> Տես **Pierre Bergeron, Voyage en Asie, tome I, էջ 154**: Վերը նշված նամակը ֆրանսերենից հայերեն է թարգմանել Ա. Գալստյանը (տես **Ա. Գալստյան, նշվ. աշխ., էջ 85**):

<sup>47</sup> Տես **Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 4, էջ 558, նաև՝ Գ. Յովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 956**:

<sup>48</sup> Գ. Յովսեփյանի վկայությամբ՝ Սմբատի նշված բանաստեղծության ձեռագիրը պահվել է Տրդատ եպիսկոպոս Պալյանի մոտ (տես **Գ. Յովսեփեան, նշվ. աշխ., էջ 951-954**):

<sup>49</sup> **Ղևոնդ Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 72, նաև՝ «Assises d'Antioche», էջ 93**:

Հավելենք, որ Սմբատի գրչին պատկանող չափածո գրվածքները գեղարվեստական արժեքից առավել ունեն հիմնականում պատմական ու փիլիսոփայական բովանդակություն<sup>50</sup>:

Մեզ է հասել նաև 1251 թ. Սմբատակալ (Սմբատակլայ) ամրոցի պատին փորագրած մի արձանագրություն, ուր Սմբատը իր մասին գրում է հետևյալը.

**Սմբատ անունս Հայկազան,  
Տէր դղեկիս հայրենական  
Եւ Գունդատապլըս զհնական<sup>51</sup>:**

Բացի գրական գործունեությունից, Սմբատը զբաղվել է նաև քերականությամբ և երաժշտությամբ: Այդ են վկայում Երևանի Մատենադարանի համար 7644 ձեռագիր «Ավետարանում» Սմբատի ձեռքով կատարված մի քանի հիշատակությունները: Նա ոչ միայն «Ավետարան» ձեռագրի քերականական ուղղումներն է կատարել, այլև տիրապետել է առոգանության նշանների բարդ արվեստին և ըստ երևույթին նպատակադրվել է ուսուցանել ընթերցողին ճիշտ կարդալ մեր նախնիների թողած գրական ժառանգությունը: «Ավետարան» ձեռագրում Սմբատը վկայում է. «Ձմեղաւոր հողս՝ որ ստացայ զաստուածախօս աւետարանս եւ ոռոգեցի զսա քերթութեան արհեստին տասն ոռոգանութեամբն, յիշեսջիք բարի յիշմամբ ի Քրիստոս: Ով որդիք մակացութեան եւ ծնունդ սրբոյն Սիոնի՝ եթէ ի կարդալն սորա յետ կարմիր նշանացն երթայք եւ տանիք զեղանակ կարդալոյն, լաւ առնէք, բայց դժուարագոյն է, վասն զի մոռացել են ազգս ի վաղուց հետէ աւտարացեալք ի հմտութենէ սորին»<sup>52</sup>:

Ամփոփելով նյութը՝ նշենք, որ Սմբատ Սպարապետի գրական ժառանգության սույն հակիրճ բնութագիրն անգամ հաստատում է, որ այս բազմավաստակ ու բազմաժանր հեղինակը հայ միջնադարյան մատենագրության մեջ իսկապես թողել է շոշափելի ու մնայուն հետք:

**РУЗАН ШАБОЯН – Литературное наследие Смбата Спарапета (Гунд-стабля).** – В статье рассматривается литературное наследие выдающегося историографа и правоведа Киликийской Армении XIII века Смбата Спарапета, перу которого принадлежат "Летопись", "Судебник", "Антиохийские Ассизы" (перевод со старофранцузского языка на армянский), ряд писем и несколько поэм философско-исторического характера. Автор указывает время и разъясняет мотивы их создания, приводит их краткое содержание.

"Летопись" охватывает период с 951-го по 1272 гг.; уже после смерти Смбата неизвестный летописец довел в ней события до 1331 года. В книге главным образом освещается внутренняя и внешняя политика Киликийского армянского государства. Особенно подробно Смбат излагает историю царствования Левона II. Весьма важны и его сведения об армяно-монгольских, армяно-арабских, армяно-персидских и армяно-византийских отношениях.

Ориентировочно в начале второй половины XIII века Смбат осуществил перевод юридического памятника антиохийских правителей, "Антиохийских

<sup>50</sup> Սմբատի չափածո գործերի մասին ավելի մանրամասն տե՛ս **Ղևոնդ Ալիշան**, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 481, Սիսուան, էջ 71-76, նաև՝ **Գ. Յովսեփեան**, նշվ. աշխ., էջ 451, 951-958:

<sup>51</sup> **Ղևոնդ Ալիշան**, Սիսուան, էջ 73:

<sup>52</sup> Մատենադարանի ձեռագիր, № 7644, էջ 124ա:

Ассизов"; этот его труд вдвойне ценен оттого, что французский оригинал был утрачен.

В литературном наследии Смбата выделяется "Судебник" (1265). Этот правовой кодекс состоит из двухсот двух статей, отражающих социально-экономическую и политическую жизнь Киликийского армянского государства в XIII веке. Исследователи расходятся во мнениях, явился ли труд Смбата первым киликийским судебником или перед нами перевод "Судебника" Мхитара Гоша. Разбирая этот вопрос, автор статьи приходит к выводу, что Смбат Спарпет (Гундстабль) самостоятельно создал образцовый судебник своей эпохи, при составлении которого использовал канонические церковные постановления и материалы церковных соборов, а также учитывал обычаи и традиции армянского народа. По своей форме, структуре и юридическому содержанию "Судебник" Смбата – официальный кодекс, в качестве которого он и применялся в Киликии более ста лет.

С лингвистической точки зрения труды Смбата представляют собой классические образцы киликийского армянского языка, в которых использована разговорная речь той эпохи.

**RUZAN SHABOYAN - *The literary heritage of Smbat Sparapet (Goundstable)*.**- The present article dwells on some works of the XIII century man of letters and jurist Smbat Sparapet, particularly his "Chronicle", the translation of the legal monument "Assises of Antioch", several verses and letters. Smbat's "Chronicle" is a valuable source for elucidating the domestic and foreign policy of the Kilikian Armenian Republic. The "Chronicle" comprises the period from 951 to 1272. Later, after his death, an unknown writer continued it up to the year 1331. In the "Chronicle", Smbat provides a detailed description of the reign of Levon the Second, as well as presents pithy information on the Armenian-Mongolian, Armenian-Arabian, Armenian-Persian, Armenian-Byzantine relations.

It was in the second half of the XIII century, when Smbat translated the code "Assises of Antioch" from Old French. Unfortunately, the French original did not survive, and this valuable monument of medieval jurisprudence exists in Smbat's Armenian translation only.

In Smbat's literary heritage, "The Code of Law" (1265) occupies an exceptional place. It consists of 7 sections and 202 articles that touch upon the socio-economic and political life in the Kilikian Armenian Republic of the time. Considering the contradictory opinions prevailing in Armenian studies, the paper discusses whether Smbat wrote "The Code of Law" on his own or whether he translated Mkhitar Gosh's "The Code of Law". On the basis of several facts, it is concluded that Gosh's and Smbat's "Codes of Law" are not identical works. Smbat's code by its form and structure, by the inclusion of judicial materials is an exceptionally valuable code that was used in Kilikia as an official code for over 100 years.

Apart from the aforementioned works, some historical and philosophical verses by Smbat have also reached us. From the linguistic point of view, Smbat's works present classic examples of Kilikian Armenian. Smbat Goundstable bequeathed his literary heritage to us in the spoken language of his time.